Փոխանորդ Պողոս վարդապետն և առ իշխանաւորս աղդին զբռնութենէ և զանհանդիստ նեղութենէ և զծանր հարկապահանջութենէ Կուսակալին Դամասկոսի, և զնենդամիտ չարութենէ Քաղաքապետին Երուսաղէմի հանդամանօք, որպէս գրեցաք, և նոքա ծանուցեալ էին 'ի պատշաճաւոր տեղիս, և պաշտօնեայք Դրան իսկապէս գիտէին թէ քաղցր ակնարկութեամբ հայի Արքայ 'ի վերայ Հայոց։ Եւ 'ի ժողովի կոչեալ զգործակատար Կուսակալին պատուիրեցին նմա գրել առ տէր իւր, դադարիլ յանպատեհ գործոց, որ ընդդէմ է իրաւանց և կամաց Արքայի, և թէ հասարակութիւն Հայոց կացեալ յոտին պատրաստ են մատուցանել առ Արքայ գիր աղաչանաց, այլ պաշտօնեայք Տէրութեան յուսադրեալ դադարեցուցին զնոսա, եւ թէ փութանակի առաքել զտուփարն, զոր ինչ առեալ է 'ի Հայոց յերկուց ամաց հետէ, զի խնդրէ Արքայ տեռանել զայն, և թէ չընեղել զՀայս Երուսաղէմի։ Զայս ամենայն ականատես գրէ Պողոս վարդապետ առ Թէոդորոս Պատրիարք, և ինքն եւս խնդրեաց զտուփարն զոր ինչ առեալ էին Կուսակալքն Դամասկոսի և Քաղաքապետն Երուսաղէմի և այլք, թէ կանոնեալ և թէ անկանոն, նոյնպէս եւ զտուփար նախորդ Բդեշխից, զի սահմանեսցի միջասահման ինչ։ Եւ նորա պատրաստեալ զայնս առաքեաց առ նա ('ի 23 Յուլիսի)։

Իսկ փոխանակ Բդեշխին նստեալ 'ի Նային ժողովէր ըզսահմանեալ հարկս, և 'ի պահանջել նորա ը-ընդ և զայլ աւելորդ իրս, ընդդէմ կացին նմա լեռնականք Սամարիոյ զինուք, և սկսան պատերազմիլ ընդ նմա։